

Հաղորդագրու թեանը՝ ոչ եթէ արգիւիւր է
Ա. Աւետարանի աշխարհարան թարգ-
մանութեան տպագրութիւնը, այլ քրի-
ստութեան համար առաջարկեալ աշխար-
հարանը (որ գրարանի հետ տպուած
էր), յորում ամբողջ պարբերութիւնը
և տունը, ի տեղիս տեղիս նոյն իսկ հետն
եղած գրարանին հակառակ իմաստով
թարգմանուած էին, աշխարհիկը բոլորու-
մին տարբեր գրարան ընապրէն, անարժան
դատուած էր զայն տպագրութեան, և կարի
իրաւամբ, վասն զի այդ անհարազատ
թարգմանութիւնը բոլորովին կըշփոթէր
սուրբ Աւետարանի խօսքերուն իմաստը,
թողութք ասել ընդ և դարձուածոց ան-
հարթութիւնները: Ընդ նմին Ա. և հափառ
Յիսուսն պատասխանելոյն մէջ յիշուած
է թէ՛ օգտուէաւ ևս է աշխարհարանին
հետ գրարանն ալ տպել: Ա. և հափառ շօր
գրոյն իմաստը այս է, թող ուրեմն ողջա-
միա ընթերցողք դատեն թէ՛ սրբափ մեծ
ստախօս է Մշակը:

Թո՛ղ զխնայ Մշակը՝ որ Ա. և հ. Հայ-
րապետը վաղուց տնօրէնութիւն ըրած է
Ա. Աթոռոյս տպարանին մէջ տպագրել
ըստ վաղեմի սովորութեան ազգին Ա. Ա-
ւետարանին գրաբանն ու աշխարհաբանը
ի Ռաֆի զգո՛ւլաւոր և հարազատ թարգ-
մանութեանը: որպէս զի նախ ժողովուր-
դը իւրեանց կարգացածը լաւ ի միտ առ-
նու, երկրորդ՝ թիւր բացատրութիւններ
չտայ կարգացածին անմշակ աշխարհա-
բանով, և երրորդ՝ օտար քարոզչաց սը-
խալ մեկնութեանց դէմ իրբն զէն հոգի-
ւոր ներկայացնէ ի կարեւոր դէպս կատա-
րեալ վստահութեանը այն ստոյգ թարգ-
մանութիւնը, և բանիւ բերանոյ ևս դէմ

դնել կարողանայ այն բազմաւեանկ ա-
ռարկութեանց, զորս մոլորամիտ քարո-
զէջ մերս կրօնի և Աստուծոյն զէմ
կյարուցանեն:

Բողոքականութեան ջատագով Մշա-
կին աւելորդ էր յայտնել Մայր Աթոռոյ
այդպիսի ուղղափառ և հեռաւեւ դիտա-
ւորութիւնը, և միք ալ մտադիր չէինք
նորա անվերջանալի՝ հակառակաւէր և
մտացածին գրգարտութեանց պատաս-
խանել՝ և այսու ընծայել իրեն այն պա-
տիւր՝ որում զինքը միշտ անարժան կը-
ճանչնալէ, և համոզուած ևս եմք՝ որ
նա լռութիւնը կջանայ միշտ ընդունել
տալ պարզամիտ հասարակութեան իրբն
հաստատութիւն իւր երեւակայեալ ճըշ-
մարտախօսութեան, բայց զիտնալով որ
անհրաժեշտ պարտք է ամենայն ճշմարիտ
քրիստոնէի և մեզ իսկ զդուշացնել մեր
սիրեցեալ ազգը, մանաւանդ միամիտ և
բարեկրօն զիւղացիները իւրեանց Մայր
Աթոռոյ և կրօնի թշնամիներէն, ուս-
տի այս հակիրճ բացատրութիւնը գրել
հարկ համարեցանք, զոր կինդրեմք ազգ-
օգուտ Արարատին մէջ հրատարակել ի
միամտութիւն հայազգի հասարակու-
թեան:

ՌԹԱԷ.

Ի ՎԱՅԱՐՇԱՊԱՏ:

ՐԱԳՈՒԱՅ ՀԱՅՈՑ

ՐԱԲԵԳՈՐԲԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՇԵԻ:

Խաթաբաթ-Լեան Արարատ Ա՛մաբրայ:

Ազարկելով Բագուայ Հայոց ազգաստայ ու Բա-
րեգործական ու Ընկերութեան համառօտ հաշիւը
խնդրում եմ փոքր ինչ տեղի շնորհել Ձեր ազ-

